

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Տարեկան . . 12 Ձր.

Վեցամսեայ . . 6 "

ԱՐՏԱՍՏՄԱՆ

Ե. կու թիւ մեկ ծրարով

Տարեկան . . 14 Ձր.

Վեցամսեայ . . 7 "

ԱՄԵՐԻԿԱ


Տարեկան 2,60 Տօյար

Վեցամսեայ 1,50 "

Կ Ա Ն Խ Ի Կ

Ծանուցման տւոյր

20 ամսիկով



Լ Ր Ա Գ Ի Ր

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

Rédaction du journal

„Iravounk“

VARNA (Bulgarie)

Редакция

на ВѢСТНИКЪ

„Иравункъ“

ВАРНА (България)

Գրութիւնք եւս

չեն տրուիր

ՀԱՅԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Մեր թիւ 16ի խմբագրականով
Հայկական կեդրոնի վերջին երկ-
պառակութեան վրայ խօսելով կը
սէինք. «Հայ ժողովուրդը և մաս-
նաճիւղերը ներկայ պարագային
պարտին վերապահութեամբ վերա-
բերուի կեդրոնի երկու պառակ-
տեալ հատուածներուն մէկը մէկու
դէմ հրապարակ նետած ամբաս-
տանութեանց մասին»:

Մեր այս յանձնարարած վերա-
պահութեամբ վերաբերումը այն
օգուտը պիտի ունենար որ կեդ-
րոնի երկպառակութիւնը մասնա-
ճիւղերուն մէջ ալ ծաւալ չգտնէր.
այլ միայն այս վերջինները երկու
կողմերու յայտարարութիւնները
ու շրջաբերականները պարզապէս
աչքէ անցնելէ վերջ, միշտ սկեպ-
տիկ և պաղարիւն մնալով ըստեւ
ու գրուածներու մասին, իրենց
տիրական պարտք համարէին պատ-
գամատրական ժողովոյ մը գու-
մարումը փութացնել, որ կարելի
ըլլայ բոլոր ամբաստանութիւնները
և ամբաստանողները լսել, խըն-
դիրը մօտէն քննել և յանցաւոր-
ները որոշել և պէտք եղած կար-
գադրութիւնները ընել ձեռնհաս.
Բայց ցաւալի է ըսել թէ կեդ-
րոնի պառակտիչները չուզեցին
մասնաճիւղերը հանգիստ ձգել,
Արդումանանց—Սաբունի (հին
հատուածէն ընտրուած) կեդրոնի
անդամները, չը բաւականանալով
միացեալ կուսակցութեան կեդրո-
նատեղիէն վաւերի ու յերա ձըն-
դունիլ նախկին վերակազմեալ հատ-
ուածէն ընտրուած իրենց ընկեր-
ները, հարկ դատեալ են Ռուբէն
կարապետեան անունով գրաշար
մըն ալ ներկայացուցիչ զրկել Ռու-
մանիա և Պուլկարիա, անոր պաշ-
տօն տալով որ ամէն գնով հակա-
ռակի պատգամաւորական ընդհա-
նուր ժողովոյ գումարման, ինչ որ
միակ փրկարար միջոցն է երկպա-
ռակութիւնը բառնալու:

Այս պարտքը ոչ թէ միայն իր
ներկայացուցչական պաշտօնին բռ-
լորովին անյարմար մէկն է, ինչ
որ տեսանք և ունկնդրեցինք, այլ
նաեւ բոլորովին հատուածական

ոգուով ներշնչուած լուսանքներէ և
տառնց փաստի անուանարկումնե-
րէ զատ լուրջ նախագաւառութիւն
մը անկարող է արտասանել, իրեն
գործունէութեան եղանակ ընտրած
է մասնաճիւղերու ոչ անդամնե-
րուն հետ տեսնուել, որոնք խորհ-
լու և խօսելու մասին իրմէ աւելի
անկարողներ են, ասոնց ներկայա-
ցնել կեղծած նամակներ, սեր-
տուած սուտեր, միմիայն այն էր
պատակով որ կարելի ըլլայ կարգ-
մը քաղաքներու մէջ գոհ 5—6
միամիտներ համոզել և անոնց մի-
ջոցաւ մասնաճիւղեր կազմել որով
յաջողի գէթ զինք զրկող Արդու-
մանանց—Սաբունի չեդրոնին գոյու-
թիւնը ապահովել, առանց խղճա-
հար կերպով մտածելու թէ՛ Լոն-
տօնի մէջ իբր կեդրոն 2—3 մարդ
ապրեցնելով, տարին քանի մը
թիւ Հնչակ հրատարակելը մեր
հայրենիքի դատին մազի չափ օ-
գուտ չկրնար ընծայել, այլ ընդ-
հակառակը ժողովուրդը յուսահա-
տութեան կրնայ մղել:

Արդ, կեդրոնի երկպառակութեան
յետոյ երբ Ամբրիկայի մէջ Սա-
պահ—Գիւլեան մը և այս կողմերը
Ռուբէն կարապետեան մը քանի
որ իրենց գործ ըրած են մասնա-
ճիւղերու մէջ ալ հատուածական
ոգի արծարծել և երկպառակու-
թիւն ձգել, ամէն զգայուն հայու
վրայ նուիրական պարտք կը ծան-
րանայ այդ պառակտիչները ան-
յաջողութեան մատնելու համար
ու ժողով ընդհանուր պատգամա-
ւորական ժողովին գումարմանը
աշխատանքներուն, Ռոմֆիստեալ այդ
ժողովին մէջ միայն կարելի լինայ
ըլլալ չարը բարիէն որոշել, փոքր
և մեծ յանցաւորները ճանչնալ և
վերջապէս արդէն միացեալ Հնչակ-
կուսակցութիւնը ամրապնդել հաս-
տատ հիմքերու վրայ, որուն պիտի
յաջորդէ անտարակոյս ուրիշ յե-
ղափոխական կազմակերպութեանց
ընդհանուր միութիւնը:

Այն ատեն հայ ժողովուրդը պի-
տի կրնայ ազատիլ կուսակցու-
թեանց իրարու դէմ արձակած
պառակտիչ և թունաւոր սլաք-
ներէն, և վստահութիւն պիտի ու-
նենայ իր նիւթական ու բարոյա-

կան ուժերը տրամադրելի ընել
միացեալ յեղափոխական կազմա-
կերպութեան՝ որ այլեւս ներքին
կռիւներէն ու վճերէն զերծ, պի-
տի կրնայ իր բոլոր ուժը և ուշը
գործածել միմիայն ընդհանուր
թշնամին, այսինքն թուրք բռնա-
կալութեան դէմ:

ԳՈՒՐԱԿՔ

ՕՐՈՒՆԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

ՊՈՒԼԿԱՐԱԿԱՆ ՏԱԳՆԱԳՐ

Պուլկարիոյ նախարարական տագ-
նապը, որ յառաջ եկած էր գլխաւորա-
բար պատերազմական գործերու նա-
խարար՝ Բաբրիքօֆ զօրավարին հրա-
ժարական տալով, չորս օրուան տե-
ւողութենէ մը ետքը վերջ գտած է:

Ն. Ա. Բ. Ֆէրտիսանտ իշխանը, իր
մօտը խորհրդակցութեան հրաւիրելէ
ետք Սապահիէի մէջ մեծամասնութիւն
ներկայացնող զանազան կարեւոր խմ-
բակներու պարագլուխները, ու պահ
մը նոր դահլիճը կազմելու պաշտօնը
ազգայնական կուսակցութեան պետ՝
Մ. Կէշիֆի յանձնելէ ետք այս վերջ-
նայն անպայման անյաջողութեանը
առջեւ— վերստին նոր դահլիճը կազ-
մելու պաշտօնը կը վստահի հրաժար-
եալ նախարարապետ ու արտաքին
գործերու նախարար՝ Տօքթ. Տանէֆի.
Ուրիմի, Տօքթ. Տանէֆի վերստին
պուլկարական նախարարութեան վը-
րտի կը մնայ. իր բոլոր պաշտօնա-
կիցները իրենց պաշտօնին մէջը պա-
հելով, — բայց ի պատերազմական գոր-
ծերու նախարար՝ զօրավար Բաբրիքօ-
ֆէ, որուն նոյն պաշտօնին մէջ կը
յաջորդէ Սօֆիայի զինուորական վար-
ժարանին ընդհանուր կառավարիչ
ու նախկ. նախարար՝ գնդապետ Սալօֆի:

Ապահովապէս, Մակեդոնական խնդ-
րոյ նկատմամբ վերջին մէկ քանի ա-
միսներու մէջ Տօքթ. Տանէֆի կառա-
վարութեան հետեւած քաղաքականու-
թիւնը, ու բռնած զիրքն էր որ, հետ-
զհետէ ժողովրդական խաւերու, ու
մանաւանդ զինուորական շրջանակնե-
րու մէջ առիթ կուտար սաստիկ քըն-
նադատութեանց, զօգոհութեանց, նոյն
խկ գրգռութեանց, որոնք վերջը վեր-
ջը հարկաւորապէս յանգեցան պատե-
րազմական նախարարին ու դահլիճին
ալ հաւաքական հրաժարականին:

Տեղի տալով Եւրոպայի զանազան
Մեծ Պետութեանց կողմէ մակեդոնա-
կան շարժումին տարածութիւնը սահ-

մանափակելու մասին իր վրայ եղած
ճնշումներուն, — մանաւանդ իբր գերա-
զանցօրէն ուստաք դահլիճ մը, հա-
մակերպելով Սէն Բէրնարդիէ եկած
բացորոշ խորհուրդներու (ուր չեն ու-
ղեր որ իրենց հաշիւներուն անյարմար
պարագայի մը մէջ մակեդոնական խնդ-
րոյ խօսք ըլլայ), Տօքթ. Տանէֆի հե-
տամտեցաւ աւելի յարատեւութեամբ
ու յամառութեամբ շարունակել մակե-
դոնական գործունէութիւնը օրինա-
կան, կանոնական պայմաններու մէջ
շրջափակելու գործը, որը սկսեալ էր
իր վախճանեալ նախորդը՝ Գարալէ-
օֆի, Ռատուլալօֆի ազատական դահ-
լիճին յաջորդելուն հետեւեալ օրն իսկ:

Այսպէս, վերջ գտաւ մակեդոնական
Կօմիսիոններու սանձարձակ ազատու-
թիւնը, հալածանքի ենթարկուեցան
անոնց պարագլուխները, որոնցմէ ու-
մանք ձերբակալուեցան, ումանք օտար
երկիրներ փախելով ազատեցան, ու ու-
մանք ալ (ինչպէս Չօնչիվի գործակից
— ընկեր՝ ուսուցչապետ Միխայիլօս-
քիւն), ով գիտէ ինչ միջոցներու շնոր-
հիւ, յանկարծ լքելով իրենց դիրքը,
զաղափարներն ու յեղափոխական աս-
պարէզը, սկսան համբերութեան, ըս-
պասողութեան քարոզներ կարգալ ու
գրգռուած ժողովուրդը անգործութեան
հրաւիրել:

Բայց հարկ էր նկատողութեան առ-
նել հանրային կարծիքը. յայտնի է
թէ ցեղային, լեզուական ու կրօնա-
կան ինչ սերտ կապերով Պուլկարիոյ
ժողովուրդը ինքզինքը միացած, նոյ-
նացած կզգայ իր Մակեդոնիոյ դժբաղդ
հայրենակիցներուն հետ, — թէ՛ նոյն
խկ պահ մը մօտեալ ուղիքը պուլկար
բանակի նուիրապետական շրջանակ-
ներուն մէջ ծագումով մակեդոնացի ըս-
պաներու գերակշիւ դիրքը:

Կառավարութիւն մը, ըլլայ իսկ
իշխան մը՝ որ պիտի համարձակէր
հանրային կարծիքին այս զօրաւոր հո-
սանքը քաղաքներէ, հարկաւորապէս
ստոյգ, անխուսափելի անկումի մը իր
գոյութիւնը մատնած պիտի ըլլար.
այս պատճառաւ ահա, նորին Արքա-
յական Բարձրութիւնը, հակառակ իր
ըզանքներուն խաղաղասէր ու բարե-
կամական վերաբերութիւն մը ունե-
նալու դէպի Ռուսիոյ կառավարու-
թիւնն ու Արքունիքը (որոնցմէ տա-
կաւին քիչ ատեն առաջ արքայաւա-
նի պաշտններով էին իրաւարարուեցաւ),
իբր ամէն բանէ առաջ Պուլկարիոյ ժո-
ղովուրդին վրայ իշխող մը, չէր կարող
Տանէֆի դահլիճին տարապայման ուստա-
սիրութիւնը իր իշխանական հաւանու-
թեամբը նուիրագործել. զօրավար
Բաբրիքօֆի հրաժարականը, որ ար-
դիւնք էր զինուորական կարգ մը
պատրաստութեանց մասին տեղի ու-

նեցած անհամաձայնութեանց, զէպ-
քերու ընթացքը գահավիժեց ու ամեն
բան լուսարանեց: Դիւրաւ հասկնա-
լի պատճառներով, Ն. Բարձրութիւնը
մերժեց պատերազմական նախարար
անուանել տօքթ. Տանէվի ներկայա-
ցուցած թեկնածուները: Երբ Նա-
խարարութեան հրաժարելու միջոցը
միայն կը մնար:

Գոթախտապէս, մանաւանդ Սպարա-
նիէի մէջ ծանրով խտնեցող մեծամաս-
նութեան առջեւ, այսօր վերստին
տօքթ. Տանէվ կառավարութեան գը-
լուխը կը կոչուի. բայց տարակուսի
կարելի չէ՝ կամ տօքթ. Տանէվ հա-
ւանած կը լինի: հանրային կարծի-
քին անգիմագրելի հոսանքին առջեւ,
փոխել իր քաղաքական ուղղութիւնը,
Մակեդոնիոյ պուլկարներուն ի նպաստ
բռնել աւելի որոշազորու ու գործու-
նայ զիրք մը, ու կամ թէ վերստին
դատապարտուած կըլլայ մօտալուտ
անխուսափելի տապալումի մը:

Տ. Է.

ԿՐՏՈՒՆԻ ԳՈՐԾԱՅԻ ՄԷԿ ԴԱՄԱԿ

(Ֆրանսացի կոմսոհի Գոլոնայի
նուագի Լը Կոանի մէջ հաստատած
հայկական որբանոցին վրայ կարգ մը
հայ թերթիքու կողմէ գանադան քը-
նագատութիւններ եղան. որպէս թէ
կոմսոհին հայ որբերը իբրեւհագործու-
մի աղբիւր մը կը գործածէ եղեր, որ-
պէս թէ որբերը թշուառ վիճակի մը
մէջ կը գտնուին եղեր, եւ այլն. այս
առթիւ կոմսոհին խմբագրութեանս
զրկած է հետեւեալ նամակը, զոր
թարգմանելով կը հրատարակենք բա-
ցարձակ անկողմնակալութեամբ առանց
երբէք ըստանձնելու վաւերականու-
թիւնը երախաւորել կարենալու, ու
սպասելով որ Տ. Միշաս Զերազ ու
հայր Գիպարեան իր խնդրոյն ահա-
նաւես անձեր, մեզի բերեն ինչ
լրացոյցիչ լուսաբանութիւնները

Տ. Խմբագիր Իրաւունք լրագրոյ

Ինծի խորհուրդ կուտան, նկատի

առնելով ձեր բարեացակամութիւնը,
ձեր լրագրին արժանապատուութիւնը,
ձեզի դիմել որպէս զի հրատարակու-
թեան յանձնեմ իմ պատասխանս, զի
ընելու պարտաւորուած կզգամ:

Պիտի ուզէի շարունակել արհամար-
հելու այն յիմար զրոյցները, որոնք
Շարժում ըստած ստույթեանց մէջ կը
հրատարակուին միայն թէ չսփը ալ
անցած է ու պարտաւոր եմ պատաս-
խանել:

Նախ այդ թերթին թղթակիցը,
պարոն մը որ արտոգրուեցաւ Ռուսա-
նիայէ ու որ ընդունայն կը փորձէ
հոս հպատակ գրուիլ, (պատիւ մը որ
երբէք պիտի չունենայ, վասն զի
հարկ դատուածը պիտի ընեմ), եկաւ
զիս գտնելու հայր Գիպարեանի կող-
մէն, ինծի ըսելու համար թէ բոլոր
տղաքներն ալ արձակելու եմ, նկա-
տելով որ անոնցմէ ոչ մէկը որբ չէ
ու ընդհանրապէս ամէնքն ալ հարուստ
են, ու Պուլկարիոյ ու Ռուսմիոյ
հայերուն համար ծառօթ բան մըն է
չհագործելը այն կոտորածներուն յի-
շատակը, որոնցմէ իրենք բնաւ չտա-
նապնդան, իրենց գաւազները հան-
րային օտար գթութեամբ մեծցնել
տալու համար, զթու թիւն որը սահ-
մանուած ըլլալու է ճշմարիտ գոհեցու-
նորութիւնը աւելցուց թէ սքանչա-
ցած էր (անդուգիտութիւն) մեր հիմնա-
կութեան վրայ, զոր իշխանական
(բառ առ բառ) կը գտնէր, ու կը կար-
ծէր պարտաւոր ըլլալ ինձմէ ներողու-
թիւն խնդրելու յանուն բոլոր անոնց
որոնք բամբասած էին թէ՛ զիս եւ թէ՛
հիմնարկութիւնը:

Այդ մարդը աւելցուց թէ այնքան
ամօթ կըզգար հայ ըլլալուն վրայ,
որ բոլոր կրցածը ըրած էր, որպէս զի
իր զաւակը ձեռք ձգէր մեր Բարիքի
զպրոցներէն մէկուն մէջ ձրի ընդու-
նելու թեան արտօնութիւն մը ու ա-
տով իսկ Ֆրանսացի ըլլար. աւելցուց
թէ ինքն իսկ Ֆրանսացի հպատակ
արձանագրուելու համար ինծի կը դի-
մէր. խօսքը վերջացուց պահանջելով
ինձմէ 100 ֆրանք... զոր բնակա-
նաբար ես անոր չտուի:

Պարոն Սիլէ ուրեմն Շանդեռ մըն է,

զգոհ իր անյաջողութիւնէն. պիտի
չարունակէի զայն արհամարհել, եթէ
Մարտ 5ի Շարժումին մէջ չը գտնէի
հայր Գիպարեանի մէկ կարծեցեայ նա-
մակին ընդօրինակութիւնը. որովհե-
տեւ այդ քահանայն շտորնանար այդ-
պիսի մարդոց հետ տեսակցելու ու այդ
նամակին կարգ մը մասերն ալ ձիւղ
են, կը պատասխանեմ:

Թէ, իրաւ, ես հայր Գիպարեանին
գրեցի քիչ մը ազգու նամակ մը,
վերջ գնելու համար այնպիսի մար-
դերու զրոյցներուն, որոնք կըսէին
թէ անոր կողմէն կուգան, մէկը որ-
պէս զի ինձ ըսէ որ, եթէ երբէք ես
զայն հիմնարկութեան պաշտօնական
քահանայն չանուանէի, չողարարձու-
թիւնը ու գաղթականութիւնը կա-
թողիկոսէն արտօնութիւն ձեռք պի-
տի ձգէին տղաքները իմ ձեռքերէս
առնելու համար. ուրիշ մը, թէ
հայր Գիպարեան կը պահանջէր որ
եւ քննիչ մասնախումբ մը անուանեմ
հայերէ բաղկացած. որոնց վրայ ես
ալ հայր Գիպարեանի գրեցի թէ մենք
Պոլիս չենք գտնուիր, ու մեր երկ-
րին մէջ անոր կուտան պատուոյ մաս-
նախումբ անուան, կը բաւէ որ, ա-
ւելցուցի, այդ մասնախումբը չուզէ
իր գրամագրութիւնները հսկել, այ ինքն
Ձեռնարկին մէջ բաժնի մը գնել...
Կունտուի Գոյոնու
(Մնացեալը յաջորդով)

ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆ

ՄԱՆՈՒԿ ԹԻՍՈՒՍԻ ԱՆՈՒԱՄԲ

Ի նպաստ հայ որբերու

Հետեւեալ հանգանակութիւնը կա-
տարուած է Սիլվէնի մէջ, տեղւոյն
Տ. Վաղինակ Հօր ձեռքով:

Պնակի հասոյթ Գնդեան առաւօ-
տուն, 8 ֆրանք 80 սանդիմ. Ստարա-
Ջալօրս կայարանի աշխատող Հայաս-
տանցի եղբայրներէ 1. Բէրմէնի կա-
յարանը աշխատող Հաստանցի եղ-
բայրներէ 14. Տ. Տ. Ծանփեան 5.
Յ. Թաղաւորեան 5. Պաքլեան Թա-
րու թիւնեան 5. Մ. Բուսեան 3. Յ.
Փափաքեան 3. Կ. Գ. Գ. Գ. Գ. Գ. Գ.

գապետեան 8. Երուանդ Ղոնչէկիւ-
եան 2. Յովհաննէս Փիլիպպոսեան 2.
Մարտիկ Գարակէօզեան 2. Մկրտիչ
Տէր Արիստակէսեան 1. Համբարձում
Մարտիրոսեան 2. Յովհաննէս Փա-
փաքեան 2. Յովհաննէս Փէշէկեան 3.
Մկրտիչ Սարաֆեան 5. Մանուէլ ձե-
րանօֆ 5. Եղբարք Սահակեան 5.
Թաղաւոր Գարակէօզեան 5. Գրիգոր
Շէհրիկեան 1. Գրիգոր Ժամագործ 1.
Թարութեան Պօլոսեան 3. Գեորգ Փէ-
շէկեան 2. Մուրատ չափուլ Ղազարեան
(կայարան Սարաֆեան) 5. Գրիգորեան
Վարդապետեան 6. Նշան Թաղաւորեան
1.50 Յովհաննէս Պօլոսեան 1. Սերոբ
Մանուէլեան 1. Յովհաննէս Պօլոսեան
1. Վաղինակ քահանայ Տէր Միշաս-
եան 5. Ներսէս Սարգիսեան 50 սան-
դիմ. Թորոս խալիբեան 50 սանդիմ:
Գումար 124 ֆրանք 50 սանդիմ:

Նոյն նպատակաւ Պալլըքի մէջ հե-
տեւեալ հանգանակութիւնը կատար-
ուած է:

Տ. Տ. Արամ Խ. Տամատեան 20
ֆրանք 50 սանդիմ. Կարապետ Ղա-
զարեան 15. Տիկին Ղազարեան 2.
Աշոտ Պօլոսեան 2. Ոմն 1. Գ. Միշէ-
կէօզեան 2. Ոմն 1. Հրանդ ձիւա-
ճեան 2. Արշակ Փանոսեան 1. Թա-
րութեան Փափաքեան 2. Անդրէաս
Պօլոսեան 5. Ստեփան Գոյոնմեան 1.
Թանաս Թոմատի 1. Յովակիմ Աբբա-
համեան 1. Խաչիկ Սարգիսեան 1.
Յովհան Աւագեան 2. Տիկին Ա ագ-
եան 1. Յ. Մանուէլեան 1. Կարապետ
Տէր Մկրտիչեան 1. Ոմն անդորմ 2.
Կարապետ Պօլոսեան 2. Մարտիկ Մար-
տիրոսեան 2. Հաճի Թաղաւոր Թուսեան
2. Հաճի Միշաս Թուսեան 2. Ստե-
փան Թիւրթեմեան 2. Յովհաննէս Գա-
զանճեան 2. Տիկին Թ. Գաւազեան 4.
Խեղրակ Վարդանեան 1. Ահարոն Փա-
փաքեան 2. Կարապետ Թորոսեան 1.
Տօքթէօր Արապեան 1. Գերձակ Թո-
րոս 1. Խաղաղ Թ. Նազարեան 1.
Սեղրակ Մարտիրոսեան 1. Գրիգոր
Ջանչիլեան 3. Թարութեան Պօլոսեան
կէօզեան 4. Թարութեան Խաչատուր-
եան 1. Ոմն 1.30. Մատթէոս Սար-

Ա. ԵՐՏԱՆԵԱՆ

(66)

ԹԻՒԱՊԱՐՏԸ

ՄԱՍՆ ԵՐՐԱՐԴ

ՎԱՆԱԿԱՆ ԻՐ ՍՔԵՄԻՆ ՏԱԿ...

— Ո՛հ:
— Երես լաւ, ի՞նչ կը մտածէք... Տէր Կոմի-
տաս արժանի չէ՞ր այդ տեսակ պատիժ մը կրելու:
— Հիմակու հիմակ բան մը չենք կրնար ըսել,
սիրելի Վանական, քանի որ մուրթ է մեզի շար-
ժապիթը: Մեր գիտցածն այն է որ տէր Կոմիտաս իր
անցեալ անարդ գերեզման վրայ զղջացած էր եւ ա-
մեն ատեն ստեղծումով մը կը յիշէր Սիւրբաղի թաղը...
Թողունք ատիկա. Վանական լուր մը ունի՞ք:
— Անցեալ օր հոս էր: Հիմակ քաղաքին մէջ ու-
սուցիչ եղած է եւ չատ կը յարգուի:
— Այո՞, ուսուցիչ եղած է, լսեցի... բայց կրնան
թէ Պօղոս եպիսկոպոսը կը հակառակի եղեր եւ կաշ-
խատի զանապառն անարդ միջոցներով պաշտօնէն հա-
նել զինքը:
— Ի՞նչու համար:
— Ասարկելով որ Ապօղոսեան է եղեր Վանական...
— Ա՛խ, աս «Պօղոսեան» ու Ապօղոսեանի խն-

դիրն ալ չը վերջացաւ, Ստուած իմ, բացառանչեց
Վանական յուզուած շնչով մը: Գիտեմ, անպատ-
ճառ այդ խնդրը պիտի ուտէ Պօղոս եպիսկոպոսը:
Յիմար փառասիրութիւնն մը՝ որ չմարեցաւ այդ մար-
դուն մէջ, մինչեւ որ գերեզման իջնէ:

— Եւ մարտ է, Պօղոս եպիսկոպոսը յիմար փա-
ռասիրութեան մը զոհ պիտի երթայ օր մը, նկատել
տուաւ Ներսէս Արքեպիսկոպոս: Թէպէտեւ կոթնած է
մէկ երկու խամբաներու եւ կառավարութեան ուժին
վրայ, բայց շատ պիտի սխալի: Խմբան իր շանը,
իսկ կառավարութիւնն իր նպատակը կը փնտռէ:
Այսօր Թիմարա բոլոր քուրտ պէկերը յարգանքով
մը կը վերաբերին անոր հետ: Անոր մէկ խօսքը
չատ աւելի կարծէ, քան երբեք դատաւորի մը օրի-
նական վճիռը: Ասոնք չեն ուրացուիր: Միայն թէ
հապարտ է, եւ ամեն բան իր կամայականութեան
ծառայեցունել կուզէ:

— Կարծեմ թէ Ջոջը չափազանց կը պաշտպանէ
զինքը, անանկ չէ՞:

— Ջոջը կը պաշտպանէ զինքը, որովհետեւ բոլոր
Թիմուրիներու աշխատանքը անոր կողմից կը լեց-
ուի: Պօղոս եպիսկոպոսը ջոջին համար հարստու-
թեան աղբիւր մըն է, որով տակններ կը հոսին...
Ո՛րէն է... Ի՞նչ կրնէ այնքան դրամները, որոնք կը
թափին Վանահօր մը ձեռքին մէջ. ո՛չ ապաքէն քա-
ղաքը կը փոխադրուին ումն ատեն:

— Երբ Պօղոս եպիսկոպոսը Վանական վրայ այդ
կերպ կը մտածէ, գուցէ ի՞նչ միջոց ձեռք պիտի
առնէք կարենալ արգելելու:

— Անձամբ տեսնելու պիտի երթամ ու իրեն պի-
տի յայտնեմ ապագայ պատասխանատուութիւնը:

— Լիմ կուզէք երթալ:
— Ո՛հ, իմացալ որ քաղաք կը գտնուի:
— Իր ազգականի՞ն տունը:
— Ի հարկէ... չարթուան երկու օրը հոն է,
կըսեն:

Վանական կուզէր կուսակցութիւններու բռնած
ընթացքին վրայ տեղեկութիւններ ունենալ. հետե-
ւաբար հարցուց.

— Կուսակցութիւնները ի՞նչ ջուրի վրայ են:

— Առ այժմ, իրարու դէմ չեն հակառակիր: Կը
զգան թէ վտանգը հասած է իրենց դուռը. կը զգան
թէ թուրք խուժանը, քուրտ պէկը ու կառավարու-
թիւնը չեն սպասիր որ մինք ալ մեր ծրարներու
տարբերութիւնը վերջացունենք ու այնպէս կուտի
զաշտը նետուինք: Աս կեդրոնացում է, աս ապա-
կեդրոնացում է չեն ըսեր: Հաւատացած են թէ
քուրտ կեդրոնացումն համակիրը թողնելով, ապա-
կեդրոնացումն հետեւէն զաջողը չփնտռել... Շաշ-
խանային գնդակն որով որ համար տարբերութեանը
չնայել, ըսել կուզեմ: Ասեկա մտած է անոնց գա-
ղափարին մէջ. Ահագին ծանրութեան մը ներքեւ կը
գտնուին, որ կը ճնշէ... Եթէ բաժնուին իրարմէ,
կորսուած են...:

— Ո՛հ, ատիկա միտքաբան է... զոնէ՛ ներ-
կայ աղետալի օրերու մէջ չհակառակին իրարու,
ընդհատեց Վանական դատաւորեալ մը:

Ներսէս Արքեպիսկոպոս ընդհատելով Վանականին
խօսքը, հարցուց.

— Վանահայրը հո՞ն է:

— Այո՛, հոն է, ընդհատեց Վանական:

— Ուրեմն պէտք է տեսնել զինքը:

գիտեան 20 սանդղիմ. Տիգրան Բար-
սեղեան 50 սանդղիմ. Ոմն 50 սանդղիմ.
Սահակ Շիրինեան 50 սանդղիմ. Սար-
գիս Կիրակոսեան 50 սանդղիմ.
Գումար 100 ֆրանք

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Իր Լ'Առաջին թիւը լինելով, Տ.
Սինա Չերապ, արտատպելէ ետք
Ձէյթունի հայերուն վրայ Աղէք-
սանդղիոյ փոխնիկին մէկ արտած-
վիկ յօդուածը, հանգանակութիւն
մը կը բանայ Ձէյթունի մէջ հայ
որդանոց մը հիմնելու համար Լ'Առ-
աջինի խմբագրութիւնը 100 ֆր.
իր կողմէ կուտայ. իր հիմնա-
կութենէն ի վեր, կ'ըսէ Պ. Չերապ,
առաջին անգամն է որ Լ'Առաջինի
հանգանակութիւն մը կը բանայ.
Զեքմայէս կը հրաւիրենք մեր հայ-
րենակիցները որ այս հանգանա-
կութեան մասնակցին. նուիրատու
ներու անունները մեր թերթին
սկիզբը պիտի հրատարակենք ու
նուիրատուութիւնները պիտի ու-
ղարկենք Գումար-Պարտի Պատրիար-
քարանին, որ բնականաբար որդա-
նոցին մատակարարութեան պաշ-
տօնը պիտի ստանձնէ. մեր վրայ
կանոնք թղթակցութեան, փո-
խադրութեան բոլոր ծախքերը,
որպէսզի նուիրատուներու յետին
սանդղիմն անգամ իր նպատակին
անեղծ հասնի. պարգեւաբար պի-
տի հրատարակենք հաշիւները ու
հանրութիւնը անցած դարձածին
գիտակ պիտի պահենք, զի բարե-
գործութեան գիւտակին ներքեւ ոչ
մէկ քաղաքական նպատակի հե-
տամուտ չենք»

— Յիշատակ ընկերվարական կու-
սակցութիւնները, իրենց տարեկան

համաժողովոյն մէջ, որ տեղի կու-
նենայ քիչ օրէն, փեռաւնութեան
պիտի ենթարկեն նաեւ հայկական
խնդիրն ու անոր նկատմամբ ընկեր-
վարականներու գործունէութիւնը

— Պոլսոյ Ծաղիկ օրաթերթը
այժմ իբր շարաթաթերթ սկսած
է հրատարակել. Պոլսոյ մէջ հայ
օրաթերթերու տարապայման ա-
ռատութիւնը այս կերպարանա-
փոխութիւնը անհրաժեշտ բրած է

— Բազմալեզու կը տեղեկանանք
թէ, Յիւստանցի հանրաժանութ-
տապագէտ Մ. Գամիլ Ֆրամարիո-
նի առաջարկութեանը վրայ, Ֆր-
անսայի աստղագիտական ընկե-
րութիւնը իրեն թղթակցեալ հաւա-
քնորած է Վենետիկի միաբանե-
րէն Հ. Խորէն Վ. Սինանեանը.
Հայ աստղագէտը նոյն ընկերու-
թեան այժմ ներկայացուցեր է
օդին բարձրագոյնը ըստիւնը
բազիլա մեթոտ մը, ոչ ոք կապ-
ցուցուի թէ օդը ոչ թէ 300 քիւ-
մէթր բարձր է մեզմէ, ինչպէս
կընդունուէր, այլ 36,000 քիւ-
մէթր:

— Երուսաղէմի Տ. Վահան Վ.
Գէշիշեանը Պաղտատի Պատրիար-
քոխանութեան կարգուած է:

— Յայտնի է թէ Երուսաղէմի
մեր վանքին միաբաններուն մէջ
ծանր անհամաձայնութիւններ ծա-
ղած էին. Պոլսոյ խառն ժողովը
այս առթիւ թերթերու հետեւ-
եալ յայտարարութիւնը տուած է.
«Խառն ժողովը ուղարկութեան
առաւ Երուսաղէմի Ս. Աթոռէն ե-
կած նորագոյն գրութիւնները, և
իրողութեանց հասու ըլլալէն ետ-
քը, վերահաստատեց իր նախորդ
որոշումը, և ըստ այնմ հարկ դա-
տեց դարձեալ Երուսաղէմի Պատ-
րիարքին մատուցանել օժանդակու-
թիւն և դիւրութիւն, որպէս զի

կարենայ հաստատել ըստ կանո-
նաց օրինաւորութիւնն ու բարե-
կարգութիւնը. և զանցառութեանց
ու անկարգապահութեանց հեղի-
նակները ի կարգ և յուղղութիւն
ածել. Եւ որովհետեւ այս մտք
արդէն գրած էր կարեւորը Ն. Սր-
բապետութեան համաձայն նախորդ
նստի որոշման, Խ. Ժողովը հարկ
դատեց սպասել արդիւնքին. իսկ
եթէ Երուսաղէմի Ս. Պատրիարքին
առջեւ նոր արգելքներ յարուցուին և
ձեռք չբերուի փափսքուած ար-
դիւնքը, այն ատեն կեղծ. Վար-
չութեան կողմէ ազդուապէս պի-
տի ի գործ դրուի պ'որ ու պատ-
շաճը»

— Պոլսոյ խառն ժողովոյ որո-
շումներու ցանկին մէջ նմանապէս
կը կարգանք. Տ. Վահան Վ.
Յակոբեան, որ նախորդ տնօրինու-
թեամբ մը Պոլսկարիոյ հովիւ կար-
գուած էր, հրաւիրուելով ժողովին,
յանձնարարուեցաւ իրեն մեկնիլ
վաղ ընդ փոյթ, Ս. Զատիկի տօ-
նական օրերուն հոն գտնուելու հա-
մար»

Սոքրահաղաք այս առթիւ կը
դրէ:

Տ. Վահան վարդապետի անձին
վրայ եղած այս կարգադրութիւնը՝
իբրև առժամանակեայ բան մը՝ իր
կարեւորութիւնը կրնայ ունենալ.
Իսկ եթէ վարչութիւնը կը փափաքի
տեւական ընել այս պաշտօնը,
հարկ է կարգադրել ֆիլիպէն
Պատրիարքարան զրկուած վերջին
նամակի մը հիման վրայ. այսինքն
եպիսկոպոս առաջնորդ մը նշա-
նակելով և իրեն յատուկ թոշակը
պահանջելով տեղական իշխանա-
պետութենէն, որ կը վճարէ միւս
բրիտանեայ ազգերու հոգեւոր
պետերուն թոշակները. ապա թէ
ոչ, Պոլսկարիոյ եկեղեցիները չը

պիտի կրնան ապահովել իրենց
հովիւին ամսաթոշակը, ինչպէս
մինչեւ հիմա յայտնուած տրա-
մադրութենէն հասկցուեցաւ»

— Կիլիկիոյ նորընտիր կաթո-
ղիկոս Տ. Սահակ Սրբազան իրա-
թոքը՝ Սիս հասնելով, հոգե-
ւոր հանգէսներով ու արարողու-
թիւններով դիմաւորուած է տե-
ղապահին ու միաբան կրօնաւոր-
ներու կողմէ. կաթողիկոսը օժ-
ուելէ վերջ հաւանաբար Պոլիս
գայ:

ԻՐԱՆԻՆԻՔԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

Կ. Էրզնկացեան Գահիրէ. — Ստա-
ցանք Ձեր զրկած 35 եւ 20 ֆր. Հա-
ճեցէք Ա. Բրուտեանը անգամ մըն ալ
տեսնել եւ իր վերջին պատասխանը
մեզ հաղորդել:

Վառնայի մեր այն ընթերցողները,
որոնք օրը օրին չեն ստանար իրենց
թերթը թող հաճին խմբագրութեանս
իմացնել, որ հարկ եղած միջոցները
ձեռք առնենք:

— Գիւղերը բնակող մեր բաժանորդ-
ներէ կը խնդրուի որ Զատիկի առթիւ
երբ քաղաք իջնեն՝ չը մոռնան թեր-
թիս բաժնեգինը փոսթին յանձնել:

«ԶԱՅՆ ՀԱՅՐԵՆԵԱՑ»

Ամերիկայ հրատարակող «ԶԱՅՆ
ՀԱՅՐԵՆԵԱՑ» շաբաթաթերթը ով որ
ստանալ կուզէ, կրնայ ԻՐԱՆԻՆԻՔԻ
խմբագրութեան միջոցաւ բաժանորդ-
ագրուիլ. կանխէկ զրկելով 10ն ու
կէս ֆրանք արձաթ, մէկ տարուան
համար:

- փոխագրութիւն մը կայ:
- ձիւղ է:
- Ատիկայ գիւղին է, երբ պիտի ըլլայ:
- Թեւեալ այս գիւղերը:
- Շատ է:
- Հարկուր հատ մը կայ:
- Հարկ չէ Վանահօրը խօսիլ:
- Հասար:
- Ես ամեն բան պատրաստած եմ:
- Ինչպէս:
- Կրցած եմ գտնել ապահով միջոց մը... ան-
հոգ եղէք: Վազգէնի խուսմէն է, եթէ ոչ Սերվա-
ղին է:
- Վազգէնին է:
- Ո՛ր է, կարծեմ թէ Գուրա-Շէյխի մը հա-
գուստը պահած էք, ընդհանրեց ներսէս Արքունիին:
- Գովս է:
- Տուէք ինձի:
- Շատ աղէկ, ուրիշ:
- Քիչ մըն ալ երես քսիլու մճուրէն պէտք է:
- Վանական բացաւ սնտուկը, ծրար մը հանց,
որուն մէջ կանաչ վերարկու մը, թուխ քօրոզ մը,
ձերմակ փաթթոց մը ու հաստիկ կապտադոյն տեղ-
լիկ մը կային: Յետոյ փաթիլի շէշ մըն ալ հանց
ևւ զանոց ներսէս Արքունիին յանձնեց:
- Կարծիր կօշիկներն ալ չէ՞ք ուղար, հարցուց
Վանական:
- Կօշիկներն ալ սուէք, մըմնեց ներսէս Արք-
ունիին:
- Երբ խորհրդաւոր ծրարը պատրաստուեցաւ, ներ-
սէս Արքունիին ստքի ելաւ, ձեռքը բռնեց իր դա-

ւազանն ու մեկնեցաւ:
Վանական միշտակ մնաց: Իր սիրտը հանդարտած
էր ինչպէս ծով մը՝ փոթորիկէն ետք:
Գնաց Մեծ Մարդը, մըմնեց Վանական ինքն-
իւրին: Գնաց, ուր որ պարտականութիւն մը կը
մղէ զինքը... Աստուած թող իր առաջնորդն
ըլլայ...:

ՎԱՆԱՅ ԶԱՅՆ

Երկու յարկի վրայ չիտում, ընդարձակ ու գե-
ղեցիկ ապարանքի մը մէջ, յիսուն անցած, բար-
ձրահասակ գերուկ կազմուածքով, պատկառելի
կերպարանքով, խորաթափանց աչքերով, թաւ ու
կէս մը ձեւով կանգնելով մարդ մը նստած էր եւ
նամակ կը գրէր:
Այս մարդը Վանայ քաղաքին Զոյն էր:
Հագած էր կովկասեան ձեւով ֆանելա ցալազ-
գեստ մը եւ գլուխը դրած էր ձերմակ թելերով նաշ-
խուն գտակ մը:
Այն սենեակը, ուր ինքը կը գտնուէր, սքանչելի
կերպով կահաւորուած էր. անոր որմնը ոսկեղած
թուղթերով պատած էին, որոնց վրայէն գիւղական
իւղանկարներ ու տոհմային անձնաւորութեանց լու-
սանկարներ կախուած էին. տախտակամածը ծած-
կուած էր պարսկական ընտիր գորգով մը, որուն
վրայ շարուած էին բազմոցներ ու աթոռներ, լայն
պատուհանները թաւիչէ ծանրաղին վարագոյրներ
ունէին. մէջտեղը դրուած էր քառակուսի սեղան

մը՝ փղոսկրեայ կտորներով զարդարուած. պատին
տակ մեծ ու ոսկեգոյն չըջանալներով քանդակուած
հայեւի մը ու ընկուզի փայտէ չինուած զարան մը
կային. ձեղունէն կախուած էր ջախ մը:
Զոյն միշտակ էր:
Երբ վերջացուց նամակը, գրեթէ անհանդարտ ու
նեղացած շարժումներով մը ոտքի ելաւ, թաւիչէ
վարագոյրներով ծածկուած պատուհանին մօտեցաւ
ու բանալով զայն դէպի պարտէզը սկսաւ նայիլ:
Պարտէզը հեշտալի էր: Հինաւուրց ծառերը բար-
ձրացած էին մինչեւ պատուհանը:
— Ի՞նչ պիտի ըլլայ ասոր վերջը, բացառանչեց
Զոյն ինքնիւրեւ. ո՛ր պիտի հասնի այս խոտու-
թիւնը: Բոլոր նահանգները կրակի մէջ են: Ընդհա-
նուր կոտորածը անխուսափելի կը դառնայ: Կառա-
վարութիւնը դեւ թփի մը պէս կը նայի մեր վրայ:
Ա՛խ, որո՞ւ ըսես, որո՞ւ հասկցունես: Ըրին չըրին
մինչեւ որ ժողովուրդը խելքէ հանեցին ու աս վի-
ճակին բերին...:
Զոյն խօսեցաւ ինքնիւրեւ, տրամաբանեց... ու
անխուսափ գտաւ ժողովրդեան տրամադրութիւնը.
հետեւաբար յուզուած եղանակով մը բազմոցին
վրայ ինկաւ ու երկար ատեն մտաւանջութեան մը
մէջ մնաց:
Ատ միջոցին, ապարանքին սպասաւորը ներս մը-
տաւ ու յորդանքով մը բարեւելէ ետքը, մըմնեց:
Զոյն աղա, ըստ Շէյխի մի եկած է եւ տեսնել
կուզէ ձեզ:

(Շարունակելի)

ՀԱՎԱՏԻՍԱԹԸ ԲՕԼԻԹԻԳԻՅԵ

ՍՐԱՆՊՕԼՏԱՆ ՄԵՔԻՌՈՒՊ

Միթրոփիցատա մուգիմ Բուս գոնսօլսըն չէճիրտէն տընարը կէզ մէքաէ իքէն, պիր ասքէր ալնա-վուտ թիւֆէնկ նի չէքուպ անըն իւզէրինէ ալմէշ իտէր: Գուրչուն սըրթընտան կիրուպ կէօյսիւնտէն չըգմըշ օլմաղլէ գոնսօլս Մ. Շէր պինայը աղըրճոտ ետրէլէր:

Իլք տէֆա պու խապէր ալըն մասընտա Սուլթան տէր հալ Սատ. րազաւը վէ տիկէր իքի պէօյլէք մէմուլար Բուս էլչիսինէ կէօն տէրուպ թէնսիւֆինի տըզ իթ. տիրտի: Էլչի տախի պիւթիւն ար. նափուտարըն հարէքեաթընա գար. չը մուէսսիր թէտպիրէր էլէ ա. լընմասընը թալէպ իթտի:

Իզմիրտէն 16 թապուր րէտիֆ ասքէրի Միթրոփիցայա վէ ճիվա. րա կիթմէք իչիւն եօլա չըգարըլ. տը:

Միթրոփիցատա Արնափուտար վէ թիւրքլէր պէյիւնտէ վուզու պուլան գազկատա 200 քիշի էօլ. միւշ տիր:

Պիւթիւն Մաքէթոնիանըն հա. լի թէնէմմիւլ օլընմայաճագ տէ. րէնէլէ կէլիօր:

Արնափուտարըն հարէքեաթը վէ Աստրիա վէ Բուսիա տէօվ լէթլէրինին իթթարաթը սէպէպի իլէ Սէրայտա րահաթսըզլըք արթ. մըշ տըր:

Օհրիտատա 250 ասքէր վէ 800 սիւհալը քէօյլիւլէրլէ գուզկէթլէշ. միշ պիր չէթէ պէյինտէ միւսա. տէմէ վուզու պուլմուշ տըր: Թիւրք ասքէրինէ իմտատ եէթիշմիշ օլ. մաղլէ չէթէի իհաթէ իթմիշլէր տիր:

Թ Ի Ի Ր Ք Ի Ա

Բուս էլչիսի գոնսօլսըն ետրէ. լէնմէսի իւզէրինէ Պապը Ալիէ չէ. տիտ լիսանլէ Արնափուտարա գար. չը թալէպաթտա պուլընտըղընտան մատա, թիւրք տէվլէթի Մ. Շէրպինանըն հայտընա մէսուլ օլաճաղընը իթթար իթտի: Պիւլ ախէրէ Մ. Չինօվիէֆ Աստրիա էլչիսինէ կիթմէօնտէ, պու Արնա. վուտարա գարչը միւլաթմ պիր լի. սան իսթիմալ իթտի, զիրա էօ. թէտէն պէրի Աստրիա Արնա. վուտարըն համիսի ատտ օլընըր:

Շիմտի Սուլթան քէնտի սէրա. լընը մուհաֆազա իտէն արնափուտ ասքէրլէրտէն տախի շիւրհէլէնի. յօր, զիրա պուլնար հէր նէ տէ օլուր իսէ նիհայէթ գալպէն քէն. տի միլլէթտաշարընա թարաֆկիր օլաճաղար:

— Պուլկար սինօրընա եագըն Մըսթաֆա Բաշատա տինամիթլէ պօղուլմուշ օլան չըմէնտըֆէր քէօրիւսիւ պիր կիւն զարֆընտա թէքրար ետրըլմըշ տըր: Պու իշ.

տէ Մաքէթոնիալը չըմէնտըֆէր մէմուլարընտան շիւրհէ օլընըր, կէօնա պուլնարըն գոմիթէ իլէ միւնսիւպէթլէրի վար ըմըշ:

— Պիր թազըմ Մաքէթոնիալը. ար թարաֆընտան Սուլթանա չու լիլէկրաֆ կէօնտէրիշմիշ օլտըղը Սթանպօլտան թաւա պիւտիրի. միշ տիր:

Էկէր իսլահաթ ապրիլին ետրըր. նա գատար իճրա օլընմազ իսէ, պիւզ տախի թիւրքլէր իլէ ալնը մէրհա. մէթսիլլիքտէ պուլընաճաղըք նասըլ քի օնլար պիզէ գարչը պուլընտըլար, անլէրին պէշիկտէքի էվլաուարընը, գարըլարընը գաթլ իտէնէկիզ վէ բար. չալալաճաղըք, վալիտէլէրին րահմին. տէն համլընը չէքիպ չըգարաճաղըք վէ միլլէթիմիզ սիզին միլլէթտէն ինթի. գամ ալաճագ տըր:

Պու լիլէկրաֆ սախթէ օլմալը:

— Սէլանիքտէն Սթանպօլա կի. տէն չըմէնտըֆէր եօլը իւզէրինտէ պուլընտան պիր քէօրիւ տախի տի. նամիթլէ աթըլմըշ տըր, վէ մէզ. քիւր եօլտա պիր թիւնէլ պօղուլ. մուշ, Պու խարա գիլլէթ՝ Ալէքսի Բօրօմիք նամ պիր պուլկար չէթէ. նին րէյիսինտէն շիւրհէ օլընտըղը վէ տիրօմաթլար պէյինտէ պուլ. կար գոմիթլէրին պու հարէքեա. թը թէքպիհ իտիտիկի Սթանպօլ տան պիրտիրիլիօր:

— Բուս վէ Աստրիա էլչիլէրի ապրիլ 3 տէ Սուլթանըն հուզու. րընա գապուլ օլընտըլար, թաֆ. սիլաթ եօգ:

— Սթանպօլտան վէրիլէն պիր թէլէկրաֆա պինաէն, ախիլէն Մաքէթոնիալա գոմիթլէրին գուլլանտըղը տինամիթլէր Պուլ. կարիտան իչէրի կիթմիշ օլտըղը էնվաթ տէլիլէրլէ թէպէյիլին օլը. նըր ըմըշ:

— Պապը Ալիին խաֆիկն ալ. տըղը մալիմաթ իւզրէ, գոմիթէ. լէրին տահա բէք չօգ չէլ խարապ իտէնէլէրի վէ Սթանպօլտա վէ Սէլանիքտէ տախի վիւտհիշ ամէ. լիլաթտա պուլընաճագլարընա գար. չը բէք սըզը թէտպիրլէր էլէ ալըն. մըշ տըր:

— Միթրոփիցատա ճէհր օլընան Բուս գոնսօլսըն էօլմիւշ օլմասընա տաիր չըգան հափաթիս էսասըզ տըր: Անըն թէտափիսի իչիւն Սուլ թան՝ մէշհուր ճէրահ Գաւալուր օլըլը, տէրհալ Միթրոփիցայա եօլլամըշ, քէզա Պէլլաուտտան թա. պիպլէր չաղըրլմըշ: Սթանպօլ Բուս սէֆիրինին իքինճի թէրճէ. մանը վէ Սթիւպ գոնսօլսըն էլիէվ Միթրոփիցատա պուլընըյօրլար: Էլչի նէ թարիգ թուլաճաղընա տաիր Բէթըսպուրկտան թալիմաթ պէքլէյօր:

— Օհրիտատա գարըլըզլըք չու եօլտա զուհուր իթմիշ տիր:

Պիր պուլկար չէթէսի պիր գաշ իսլամլար գաթլ իթմիշ. պաշըպօ. զուզլար չէթէի թաագիպ իտուպ անըն հըֆը օլընտըղը իքի պուլ. կար քէօլլէրի իհաթէ իթմիշլէր: Պուլնու իւզէրինէ, տիկէր 12 պուլկար քէօլլէրտէն էհալի պաշը

պօղուզլարը մուհասէրէյէ ալմըշ վէ չէտիտ միւսատէմէլէր վուզու պուլմուշ, չօզլար հարէլէնմիւշլէր, վէ չէթէ գաշմայա մուպաֆագ օլմուշ, Շիմտի հիւքիւմէթ մէզքիւր պուլ. կար քէօլլիւլէրին էվլէրինէ տաղըլ. մալարը իչիւն միլաթմա՝ է թէտա. պիրլէր էլէ ալմըշ տըր:

— Միթրոփիցատա Բուս գոնսօ. լսընը ետրէլէյէն արնափուտ իպ. րահիմին ասքէր օլտըղը սէպէպլէ Սուլթան բէք միւլթէսիւր օլմուշ, վէ Երլազտա պուլընան էսկի. թիւրք րաշալարըն վէ արնափուտ զապիթլէրին րէլլէրի խիլաֆընա օլտարագ՝ Արնափուտարա գարչը չէ. տիտ թէտպիրլէր էլէ ալընմասընը էմր իթմիշ տիր: Ժէնէրալ Շէմսի րաշա Արնափուտարը ճէզալաճագ վէ իթաաթա կէթիրմէք իչիւն է. միլլէր ալմըշ օլտըղը Սթանպօլ տան պիրտիրիլիօր:

— Էրզրումտան տէօրտ ալալ Համիտիէ սիւփարիլէրի Սթանպօ. լա կէթիրմէք իչիւն էմիր վէրիլ. միշ օլտըղը տիրօմաթ տաիրլէ. րինէ ֆէնա թէէսիւր իթմիշ տիր: Համիտիլէր Մաքէթոնիալա եօլ. լանըլաճագ գան օլընըր:

— Արնափուտարը գանտըրմագ վէ թէսքին իթմէք մէմուրիլէթի իլէ՝ պիր մօլլա, պիր ժէնէրալ վէ իւշ պէօյլէք արնափուտ մէմուր. լարտան միւլթէնէքքիւր պիր հէյնէ թի մախսուսէ թէքրար Սուլթան. տան Ալպանիայա եօլլանըլմըշ տըր: Պու տէֆա մէզքիւր հէյնէթ «Իւ. թիմաթօմ» նէվինտէն գաթի պիր ճէվապ ալաճագ ըմըշ. ֆաթաթ Արնափուտարըն գապուլ իտէնէկի շիւրհէլի կէօրիւնիօր: Ճագօվատա վէ իրէքտէ 18000 արնափուտ թօր. լանմըշ օլուպ, Միթրոփիցատա մաղուպ օլտլ գլարը վէ վէրտիլէ. րի գուրպանլար իչիւն հէր հալտէ ինթիգամ ալմագ իտտաասընտա ըմըշլար: Իսլամլարըն չու ըսանը՝ թիւրք տէվլէթի իչիւն՝ խրիսթի. յանլարըն ըսանընտան տահա զի. յատէ թէհիլէրի օլտըղընը Բուս էլչիսի պէյան իթմիշ տիր:

ՏԱԽԻԼԻԾԷ

Իսթիֆա իթմիշ օլան հարպիէ նաղըրը ժէնէրալ Բարլիքով Ֆէֆ. Բրէնսին պիր իւքազը իւզրէ, ու. մուլ Պուլկարիա օրտուլարընա ու. մուլի միւլթէթիլ թալիլ օլըլտը: Շիմտիէ գատար Պուլկարիանըն գուզկէի ասքէրիէօի իւզէրինէ պու. եօլա պիր մէմուրիլէթի ֆէվզէ. լատէ իհտաս օլընմամըշ ըտը: Ֆէխամ. Բրէնս՝ ժէնէրալ Բարբի. քօլըն օրտու իչիւն նէ տէրէնէ էհէմմիլէթի օլտըղընը պարի պու. թարիզլէ կէօթթէրմիշ օլտու:

ՍԵՐՊԻԱ

Էսկի. Սէրպիա թապիր օլը. նան Ա. պանիա զըսմընտա Արնա. վալաուըն չու սօն հարէքէթլէրի խրիսթիյանլարա գարչը պիր գըր.

կըն հուսուլա կէթիրիւր վէ եախօտ Սէրպիա սինօրընա թէնափիւզաթ վուզու պուլուր գօրգօսը իլէ, գրալ Ալէքսանտր սինօր իւզէրինէ ասքէր թէնէմմիւլ օլընմասընը էմր իթմիշ, վէ րէտիֆլէրի հաղըրու. մագ իչիւն տախի ժէնէրալ Յըն. ցար Մարգօվիչէ թալիմաթ վէր. միշ տիր:

ՄԻԻԹԵՆԷՎԻԻՅԷ

Կուանտիւք վլաուրիւրին Բէթ. րապուրկտան վիլէննայա կէվէք ի. չիւն եօլա չըգմըշ օլտըղը հէր ի. քի բաթիթաթտան պա թէլէկրաֆ պիւտիրիլիօր:

Նալէհան պու եօլըլըք հէրքէ. սի էնվաթ միւլթաթէթա սէվզ ի. տէյօր:

Մաքէթոնիալա վէ Ալպանիա. տա վուզույա կէլէն չու ըսան վէ մուգաթլէլէ աճկապ իքի տէօվլէթ. լէրի եէնի թէտպիրլէր էլէ ալմա. յա մէգպուր մը իտէյօրլար:

ՍՕՆ ԹԷԼԷԿՐԱՅ

Սրաւայօլ

Բուս գոնսօլսընը ետրէլէյէն իպրահիմ նամ ասքէր արնափուտ տիվանը հարպտան 15 սէնէ քիւ. րէկ ճէզալաճագ մահքիւմ օլտու:

ՏՕՔԹ. Ն. Կ. ԹԱԳԻՌԵԱՆ

Նախկին բօրիշ Ս. Փ. Ազգ. հիւ. ւանդանոցին Կ. Պօլսոյ՝ Նախկին բօրիշ Պուլկարիոյ կառավարական հիւանդանոցներու եւ նահանգաց:

Մասնադէտ կանանց, տղոց ներ. քին եւ գաղտնի հիւանդութեանց:

Այս Պուլկարահայ բօրիշը երկար տարիներէ ի վեր իր արհեստին մէջ փորձառութիւն եւ հմտութիւն ստա. ցած՝ եւ երկու տարի առաջ ալ վիլէն. նայի համալսարանի հիւանդանոցնե. րուն մէջ աշխատած լինելով, այժմ հաստատուած է Սօֆիայի մէջ, Պու. լըվար Տօնաուքօֆ, թիւ 16:

Հիւանդ կընդունի ամէն օր ժամը 9—12 եւ 2—4 (Ը. Ե.) չորեքշաբթի օրերը ձրի կը դարմանէ իր բնակա. րանին մէջ:

2—2

ԱՐԴՈՒԿԱԳՈՐԾ

Ա. քաղ փողոց Պալըգ-Բազար թիւ 467 Գաղաքս նոր հաստատուած Մուրատ թիւղարեան եւ Սեգրակ Կուստուզեան արդուկագործ ընկերները կը ծանու. ցանն յարգոյ հասարակութեան թէ մեծ ինամըզ կարգկեն ու կոսային (գօլա) ամէն կարգի ճերմակեղէններ: Գինները խիստ չափաւոր են:

2—2

ԿԸ ՓՆՏՈՒԻԻ

Կեսարացի Նշան Մարտիրոսեան անուն անձը վախճանի է, այժմ կը խնդրուի որ անոր ուր վախճանած ու թաղուած ըլլալը գիտցողները իմա. գրու թիւնս իմաց տան:

Одговорникъ Н. Драгулевъ

Печатница Взаимность Варна.